


Ինչպե՞ս կատարել հղումներ. մեթոդական ուղեցույցներ

Ս. Բալասանյան



ՍՈՆԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ԻՆՉՊԵՐՍ ԿԱՏԱՐԵԼ ՀՂՈՒՄՆԵՐ.
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

ԵՐԵՎԱՆ

2020

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58
Բ 202

*Հրատարակության Է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
սոցիոլոգիայի ֆակուլտետի խորհուրդը*

Խմբագիր՝ Հ. Սմբատյան

Բալասանյան Ս.

Բ 202 Ինչպե՞ս կատարել հղումներ: Մեթոդական

Ուղենիշներ/ Ս. Բալասանյան.- Եր.: «Չարտպրինտ» ՍՊԸ, 2020.- 84 էջ:

Այս մեթոդական աշխատանքում ներկայացված ուղենիշները միտված են լրացնելու հղում կատարելուն վերաբերող հայալեզու նյութերի սակավության բացը: Աշխատանքում ներկայացվում է հղումներ կատարելու միջազգայնորեն ընդունելի՝ Հարվարդի ոճը: Այս նյութի շրջանակներում առաջարկվող մեթոդական ուղենիշների հիմնական նպատակն ակադեմիական հանրության ներկայացուցիչներին, մասնավորապես ուսանողներին աղբյուրների բազմազան տիպերին հղում կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության մասին գաղափար տալն է: Այն նաև միջազգայնորեն ընդունելի հղման ընթացակարգերին հետևելու ակադեմիական գործընթացի խթանման նպատակ ունի:

ՀՏԴ 378
ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-9185-5-6

© Բալասանյան Ս. Ա., 2020
© «Չարտպրինտ» ՍՊԸ, 2020

Բովանդակություն

Երախտիքի խոսք.....	6
Ներածություն.....	7
Ինչո՞ւ է գրագետ կերպով հղումներ կատարելն այդքան կարևոր.....	9
Հղում կատարելու Հարվարդի ոճը.....	11
Ներտեքստային հղման սկզբունքները.....	11
Մեկ հեղինակ ունեցող աշխատանքներ.....	11
Երկու կամ երեք հեղինակ ունեցող աշխատանքներ.....	12
Երեքից ավելի հեղինակ ունեցող աշխատանքներ.....	12
Հղում խմբագրված տեքստերին.....	12
Հղում կազմակերպությանը, ընկերությանը կամ կառավարությանը.....	13
Հղում միևնույն հեղինակի մի քանի աշխատանքների.....	13
Ինչպե՞ս հղում կատարել, երբ հայտնի չէ աշխատության/սյուժի հեղինակը.....	14
Ինչպե՞ս հղում կատարել, երբ պարզ չէ աշխատանքի տարեթիվը.....	14
Հղում ուղղակի տեքստին.....	15
Նկարների, դիագրամների, աղյուսակների և պատկերների մեջբերում.....	16
Երբ նույն աղբյուրին մեկից ավելի հղում է կատարվում.....	17
Որտե՞ղ տրամադրել հղումները.....	18
Կապելով հղումները աշխատանքի հետ.....	20
Կատարել հղումներ՝ միաժամանակ մի քանի աղբյուրի.....	21
Հղումներ հավելվածում.....	23
Մեջբերումներ.....	23
Խոսքի մեջբերում և համապատասխան կետադրություն.....	23
Մեջբերումներ ոչ հայալեզու սյուժերից.....	25
Մեջբերումներ թարգմանված սյուժերից.....	25
Վերածնակերպում և ամփոփում.....	25

Երկրորդային հղում, երբ դուք չեք կարդացել բուն կյուրը, սակայն դրա մասին կարդացել եք մեկ այլ տեղում. միջևորդավորված մեջբերում	26
Գրականության ցանկ.....	27
Գրականության ցանկի ձևաչափը.....	27
Գրականության օրինակելի ցանկ	28
Էլեկտրոնային և համացանցային ռեսուրսների մեջբերման սկզբունքները	30
Հեղինակ(ներ)ը մեջբերումներում և հղումներում	32
Բազմաթիվ հեղինակներ	32
Կազմակերպությունները և ինստիտուտները՝ որպես հեղինակներ.....	32
Տարեթիվը մեջբերումներում և հղումներում	33
Տարեթվերը և առցանց ռեսուրսները	33
Տարեթվի բացակայության դեպքում	34
Մեջբերված և հղված օրինակների օգտագործումը	34
Մեջբերման մեջ պահանջվող տեղեկատվությունը	34
Տեղեկատվության հերթականությունը.....	34
Տեքստի ներսում հղման տեսքը.....	35
Կետադրություն և տեքստային ֆորմատ.....	35
Անհրաժեշտ օրինակի որոնումը.....	35
Հղումների և մեջբերումների օրինակներ.....	36
Գրականության ցանկ.....	85

Երախտիքի խոսք

Շնորհակալություն եմ հայտնում ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտներին, ուսանողներին, նաև ասպիրանտներին, մասնավորապես՝ Օֆելիա Գրիգորյանին, Շուշան Ղահրիյանին, Աննա Աթոյանին, Հայկ Սմբատյանին, Շուշան Աբրահամյանին, Շուշանիկ Հարությունյանին, Նոնա Աղաջանյանին, Մարթա Մամյանին, Վարդան Վարդանյանին: Այս մեթոդական ուղենիշների մշակման հարցում նրանք ձեռնարկեցին անգլերեն նախատիպի թարգմանության ծանր գործը: Միայն նրանց կողմից որակյալ ու նվիրումով իրականացված թարգմանության հենքի վրա հնարավոր դարձավ ավարտին հասցնել այս նյութը: Նաև շնորհակալ եմ նրանց կողմից փոխանցված վստահության համար, որ այս աշխատանքը խիստ անհրաժեշտ է արդի հայաստանյան ուսանողին:

Շնորհակալություն Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդին այս աշխատանքը տպագրման երաշխավորելու, մասնավորապես Հասմիկ Գևորգյանին՝ աշխատանքի շուրջ կառուցողական դիտողություններ անելու համար:

Կանխավ շնորհակալություն նաև բոլոր այն ուսանողներին, դասախոսներին և այլոց, ովքեր կկիրառեն այս մեթոդական ուղենիշները:

Ներածություն

Այս մեթոդական աշխատանքում ներկայացված ուղենիշները միտված են լրացնելու հղում կատարելուն վերաբերող հայալեզու նյութերի սակավության բացը, քանի որ հատկապես ուսումնառության առաջին տարիներին ուսանողները դժվարանում են օգտվել այլալեզու աղբյուրներից: Աշխատանքի նախատիպն է Օքսֆորդի համալսարանի Բողլեան կրթության գրադարանի (2011) հղումների ուղեցույցը, որն էլ իր հերթին մշակվել է Շեֆիլդ Հալլամ համալսարանի (2010) հղման կարգի հիման վրա: Ես արդեն մոտ հինգ տարի է, ինչ կիրառում եմ այդ ուղեցույցը:

Աշխատանքում ներկայացվում է հղումներ կատարելու միջազգայնորեն ընդունելի՝ Հարվարդի ոճը (տե՛ս, օրինակ, The University of Sydney, n.d.): Սա չի նշանակում, որ այլ ոճերն օրինակելի չեն: Պարզապես հասարակագիտության մեջ կիրառության տեսանկյունից այս ոճը տարածված է, և վերջինիս տիրապետող ուսանողը հեշտությամբ կարող է տիրապետել հղում կատարելու նաև այլ ոճերի:

Այս նյութի շրջանակներում առաջարկվող մեթոդական ուղենիշների հիմնական նպատակն ակադեմիական հանրության ներկայացուցիչներին, հատկապես ուսանողներին, աղբյուրների բազմազան տիպերին հղում կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության մասին գաղափար տալն է: Այն նաև միջազգայնորեն ընդունելի հղման ընթացակարգերին հետևելու ակադեմիական գործընթացի խթանման նպատակ ունի:

Նյութի շրջանակներում զուգահեռաբար առաջարկվում են հղման ներտեքստային և գրականության ցանկում նյութը ներկայացնելու ձևանմուշներ, հիմնականում բերվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն օրինակներ: Հատկապես վերջին բաժիններում, որոշ դեպքերում ներկայացված են միայն անգլերեն օրինակներ: Հայերեն և ռուսերեն հղումների օրինակները հիմնականում հորինված

են հեղինակի կողմից, կան նաև հղումներ իրական կյուբերի: Անգլերեն օրինակները հիմնականում վերցված են Բողլեան կրթության գրադարանի ուղեցույցից:

Ձեռնարկը չի հավակնում առաջարկվող հղման կարգը ներկայացնել որպես հիմնական ձևանմուշ: Ըստ Էության, հաշվի առնելով արդի դարաշրջանում հղումներ կատարելու գործընթացի ծրագրավորման ու համապատասխան ծրագրային փաթեթների (տե՛ս, օրինակ, Zotero, n.d.; Mendeley Ltd, 2017) առկայությունը՝ այս ուղենիշների արժեքը հղում կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության իմացության խթանման մեջ է: Այնուհետև, հղում կատարելու գործընթացը կարելի է ավելի կատարելագործել: Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել, որ յուրաքանչյուր համալսարան, ֆակուլտետ, հոդվածաշար կարող է ունենալ հղումներ կատարելու իր կարգը: Ուստի, պետք չէ այստեղ ներկայացված ուղենիշներն ընդունել որպես հղում կատարելու համար անհրաժեշտ սպառիչ տեղեկատվության հիմք: Այստեղ ներկայացվում են օրինակներ, որոնցից օգտվելով՝ կարելի է ժամանակի ընթացքում կատարելագործել հղումներ կատարելու սեփական կարգը և ոճը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունելի չափանիշներին:

Եվ վերջապես, գրագետ կերպով հղումներ կատարող և օգտակար հղումներով հարուստ գիտական աշխատանքները խիստ Էական են գիտական հանրության առաջընթացի ու ճանաչման համար: Այս աշխատանքը կարելի է հաջողված համարել, եթե այն ինչ-որ կերպ կարող է նպաստել այդ գործընթացի խթանմանը հայաստանյան ակադեմիական իրականության մեջ:

Աշխատանքում առաջարկվող հղումները կարող են տեխնիկական թերացումներ ունենալ: Պետք է մտապահել, որ այստեղ կարևոր է առաջարկվող ձևանմուշների բովանդակային ասպեկտը, իսկ տեխնիկական խնդիրները հեշտությամբ հնարավոր է չեզոքացնել համապատասխան ծրագրերի օգտագործման և այս գործընթացի մեխանիզացման միջոցով:

Ինչո՞ւ է գրագոյն կերպով հղումներ կատարելն այդքան կարևոր

Գիտության մեջ ակադեմիական ազնվության դրսևորումը ամենաԷական որակներից է, որոնք ձեռք են բերում գիտաշխատողները, ուսանողները, դասախոսները և հետազոտողները: Աստոնյանի (2013) կողմից հայաստանյան բուհերում դեռևս 2013 թ. իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ հայաստանյան բուհական համակարգում բավարար տեղեկատվության պակասի, գրագոյնության վերահսկման կանոնակարգային և տեխնոլոգիական պայմանների բացակայության պատճառով ակադեմիական ազնվությունը հաճախ ու հատկապես ուսանողական աշխատանքների պարագայում չի պահպանվում: Հղման կարգի պահպանությունն ու որակը դեռևս զգալի կերպով չեն ազդում ուսանողների աշխատանքների գնահատման վրա:

Կեղծ է յուրաքանչյուր ակադեմիական աշխատանք, որը ներկայացվում է որպես սեփական՝ այն դեպքում, երբ ստեղծված է մեկ այլ անձի/անձանց կողմից. սա կոչվում է ակադեմիական հեղինակության անհիմն չարաշահում: Նյութերի, փաստաթղթերի կեղծում է տեղի ունենում այն ժամանակ, երբ դրանք վերցվում են սկզբնաղբյուրից, ձևափոխվում և ներկայացվում են որպես հեղինակային՝ առանց հղում անելու սկզբնաղբյուրին: Ակադեմիական անարդարությունը և կեղծիքներին սատարելը նույնպես անազնվության դրսևորումներ են:

Գրագոյնությունն ակադեմիական անազնվության ամենավառ դրսևորումներից է: Հաճախ ուսանողները գրագոյնություն են անում՝ առանց նույնիսկ իմանալու, որ դա գրագոյնություն է: Շատերի համար զարմանալի է, որ հարկավոր է հղում անել անգամ նախկինում իրականացված սեփական աշխատանքին կամ Էլ չտպագրված որևէ նյութի: Գրագոյնությունն այլ անձի/անձանց հեղինակային մտքի/երի ու գաղափարների, ինչպես նաև այդ մտքերի ու գաղափարների նյութական դրսևորումների յուրացումն է՝ դրանք ներկայացնելով որպես սեփականը (տե՛ս Մարկոսյան և այլք, 2014; «Ուրարտու» ԳՀՍ համալսարան, 2012): Գրագոյնությունը

տեղի ունի, երբ առանց հղում անելու նույնությամբ օգտագործվում կամ փոփոխության է ենթարկվում այլ անձանց աշխատանքի կառուցվածքը, իմաստը, հեղինակային աշխատանքի առանձին մասերի փոփոխությունը՝ նույնանման կամ նույնիմաստ բովանդակությամբ:

Ակադեմիական համայնքի այլ ներկայացուցիչների մտավոր սեփականության անօրինական օգտագործումն անթույլատրելի է: Սա տեղի է ունենում, երբ, օրինակ, քննության ընթացքում ուսանողը մեկ այլ ուսանողի աշխատանք ներկայացնում է որպես իր սեփականը, կամ երբ ուսանողները քննության ժամանակ արտագրում կամ այլ ուսանողի հետ քննարկում են քննական նյութը, հուշում են այլոց՝ նրանց գնահատականը բարձրացնելու համար: Որևէ դասընթացի շրջանակներում մեկ այլ դասընթացի համար արդեն ներկայացված աշխատանքը ներկայացնելը, նույնպես, անարդարություն է, եթե հղում չի արվում դասախոսության նյութի սկզբնաղբյուրին:

Գրագողությունից խուսափելու համար կարևոր է ակադեմիական աշխատանքում նշել օգտագործված նյութերի աղբյուրները, դրանց հեղինակներին, դրանց տպագրման, պատենտավորման, կիրառման վայրն ու տարեթիվը: Գրագետ կերպով հղումներ կատարելու և գրագողությունից խուսափելու համար հարկավոր է հետևել հղում կատարելու կարգերին և Էթիկայի կանոններին:

Հղում կատարելու Հարվարդի ոճը

Հղում կատարելու Հարվարդի ոճը հնարավորություն է տալիս ստեղծվող ակադեմիական տեքստում ներկայացնել աղբյուրների հեղինակին ու տարեթիվը: Նյութի տեքստում նման հղումն ուղղորդում է ընթերցողին դեպի գրականության ամբողջական ցանկը: Վերջինիս դասակարգման սկզբունքը այբբենականն է:

Ներտեքստային հղման սկզբունքները

Հղում կատարել նշանակում է սեփական աշխատանքում նշել ուրիշների գաղափարները և աշխատությունը: Հղման Հարվարդի համակարգն օգտագործելիս յուրաքանչյուր հղում պետք է ներառի հեղինակի ազգանունը և հրապարակման տարեթիվը՝ գրված փակագծերում: Օրինակ՝

Քննարկվող հոդվածներից մեկում (Phillips, 2006)...

Եթե հեղինակի անունը նախադասության մեջ ուղղակիորեն կիրառված է, կարիք չկա այն դնելու փակագծերում: Օրինակ՝

Քննարկվող հոդվածներից մեկում Ֆիլիպսը (2006) ...

Հղման երկու ձևն էլ ճիշտ է:

Ուշադրություն դարձրեք հղման լեզվին: Փակագծերի ներսում պահպանվում է աղբյուրի լեզուն՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն կամ մեկ այլ, բայց փակագծերից դուրս տեքստը գրվում է նույն լեզվով, որով գրվում է աշխատանքը:

Մեկ հեղինակ ունեցող աշխատանքներ

Նման դեպքում պետք է պարզապես նշել հեղինակին և տարեթիվը: Օրինակ՝

(Phillips, 2006), կամ Ֆիլիպսը (2006) սա նկարագրում է...

Երկու կամ երեք հեղինակ ունեցող աշխատանքներ

Նման դեպքում պետք է նշել բոլոր հեղինակների անունները: Օրինակ՝

(Daly, Speedy and Jackson, 2006), կամ Դալին, Սփիդին և Ջեքսոնը (2006) քննում են այս հարցը...

Երեքից ավելի հեղինակ ունեցող աշխատանքներ

Նման դեպքում պետք է նշել առաջին հեղինակին՝ ավելացնելով «և այլք».

(Russel et al., 2005), (Գրիգորյան և այլք, 1996), կամ Ռասսելը և մյուս հեղինակները (2005) սա բացատրում են...

Հիմնականում կարիք չկա բոլոր հեղինակների անունները նշելու, եթե համալսարանի/հոդվածաշարի չափորոշիչներով դա չի պահանջվում:

Հղում խմբագրված տեքստերին

Եթե որևէ աշխատանքում հեղինակների փոխարեն նշված են խմբագիրների անունները, պետք է նշել վերջիններիս և տարեթիվը այնպես, ինչպես կնշվեր հեղինակների դեպքում: Օրինակ՝

(Crouch, Jackson and Thompson, 2005) կամ Քրաուչը, Ջեքսոնը և Թոմփսոնը (2005) վստահ են, որ...

Ներտեքստային հղման մեջ կարիք չկա նշելու, որ նրանք խմբագիրներ են, սակայն հղումների ամբողջական ցանկում այս տեղեկությունը անպայման պետք է նշվի:

Հղում կազմակերպությանը, ընկերությանը կամ կառավարությանը

Եթե տեքստը գրված է կազմակերպության, ընկերության, կամ կառավարության կողմից, օգտագործե՛ք համապատասխան հեղինակի անունը և տարեթիվը: Օրինակ՝

(British Airways,, 2003) կամ Բրիտանական ավիաուղիների (2003) հաղորդման համաձայն...

Որոշ կառավարական փաստաթղթերի դեպքում պետք է ներառել նաև իրավասության շրջանակը: Առավել մանրամասն ծանոթացե՛ք «տրոհիդարանական և կառավարական փաստաթղթեր» բաժնում:

Հղում միևնույն հեղինակի մի քանի աշխատանքների

Միևնույն հեղինակի մի քանի աշխատություններ ներկայացնելիս պետք է ընթերցողին դրանք տարբերակելու հնարավորություն տալ: Օրինակ՝

հնչպես իր գրքում նշում է Գրեգորին (2004)...

Գրեգորին (2008) սա նկարագրում է...

Հղումների ամբողջական ցանկում անհրաժեշտ է աշխատությունները դասակարգել ըստ տարեթվի:

Gregory, P. (2004) *Computer viruses for dummies*. Hoboken: Wiley.

Gregory, P. (2008) *IT disaster recovery planning for dummies*. Hoboken: Wiley.

Եթե երկու տարբեր աշխատությունների տարեթվերը համընկնում են, կարիք կլինի դրանք տարբերակելու՝ տարեթվերից հետո այբբենական կարգով տառեր նշելու միջոցով.

(Nielsen, 1993a) բացատրվում է...

(Nielsen, 1993b) ցույց է տրվում...

Այս տառերը պետք է երևան նաև գրականության կամ հղումների ցանկում

Nielsen, J. (1993a) *Hypertext and hypermedia*. London: Academic Press.

Nielsen, J. (1993b) *Usability engineering*. London: Academic Press.

Ինչպե՞ս հղում կատարել, երբ հայտնի չէ աշխատության/սյուժի հեղինակը

Եթե հնարավոր չէ պարզել աշխատանքի հեղինակին, պետք է մեջբերել աշխատանքի վերնագիրը և այն ներառել հղումների ամբողջական ցանկում:

Գրքին հղում կատարելու դեպքում հնարավոր է հանդիպել շեղատառ վերնագրի, այդ դեպքում պետք է նույն սկզբունքը պահպանել հղման տեքստում, օրինակ՝

(*Կենսաբանության բառարան*, 2004) կամ *Կենսաբանության բառարանում* (2004)...

Ինչպե՞ս հղում կատարել, երբ պարզ չէ աշխատանքի տարեթիվը

Եթե հնարավոր չէ պարզել աշխատանքի տարեթիվը, անհրաժեշտ է այդ մասին նշել հղման մեջ՝ զետեղելով հայերեն սյուժեթի համար՝ «տ.բ.» (տարեթիվը բացակայում է), անգլերեն սյուժեթի համար "n.d." (no date) և ռուսերեն սյուժեթի համար "н.д." (нет даты) կրճատումը: Օրինակ՝

(Սահակյան, տ.բ.) կամ Սահակյանը (տ.բ.) մեկնաբանում է...

(Collins, n.d.) կամ Քոլինզը (n.d.) մեկնաբանում է...

Հղում ուղղակի տեքստին

Եթե մեջբերման աղբյուրում նշված են էջերը, հեղինակի անվան ու տարեթվին ավելացրեք նաև էջի համարը, որում հնարավոր է գտնել տեքստի տվյալ հատվածը: Օրինակ՝

(Լալբանդյան, 2004, էջ 126); (Giddens, 2002, p. 50)

Եթե հատվածը մեկից ավելի էջ է ընդգրկում, նշեք էջերի միջակայքը (50-51:), որտեղ այն սկսվում է:

Եթե տեքստում չկան էջերի համարներ, բայց կան համարակալված պարբերություններ կամ տողեր, դրանք ներառեք հղման տեքստում: Օրինակ՝

(*Majorstake Ltd v Curtis*, 2006, 13)

Պիեսների դեպքում նշեք գործողության, տեսարանի և տողի համարները.

«Որտեղ չեն իշխում խոսքերը, իշխում է բռնությունը» (Kyd, 1977, 2.3.108):

Որոշ գրականության, ասենք՝ պիեսների կամ պոեմների դեպքում, և՛ էջերը, և՛ պարբերությունները/տողերը կարող են համարակալված լինել: Պիեսին կամ պոեմին հղում կատարելիս առավել նպատակահարմար է նշել պարբերության կամ տողի համարը, քան էջի համարը:

Եթե բացակայում են թե՛ էջերի, թե՛ պարբերությունների/տողերի համարները, կարելի է օգտագործել միայն հեղինակի ազգանունն ու տարեթիվը: Նման դեպքեր կարող են հանդիպել որոշ ինտերնետային էջեր կամ այլ էլեկտրոնային ռեսուրսներ դիտարկելիս:

Այնուամենայնիվ, կարիք չկա էջերի/պարբերությունների/տողերի համարները ներառելու հղումների ամբողջական ցանկում:

Մանրամասն ծանոթանալու համար տե՛ս մեջբերումների կատարմանը վերաբերող ենթաբաժնում:

Նկարների, դիագրամների, աղյուսակների և պատկերների մեջբերում

Գիտական աշխատանք գրելիս հաճախ հնարավոր է, որ կարիք լինի հղում կատարելու որոշակի նկարների, դիագրամների, աղյուսակների կամ գծագրերի, որոնք կհանդիպեն գրքերում, կամ այլ աղբյուրներում:

Եթե ցանկանում եք ուղղակիորեն վերարտադրել նկարը, դիագրամը, աղյուսակը կամ գծագիրը Ձեր աշխատանքում, անհրաժեշտ է վստահ լինել, որ չեք խախտում հեղինակային իրավունքները: Ուղղակի վերարտադրության դեպքում պետք է տեքստում նշել աղբյուրի կարճ, իսկ հղումների ցանկում ամբողջական տվյալները:

Այն դեպքում, երբ նկարի, դիագրամի, աղյուսակի կամ պատկերի հեղինակը նույնն է, ինչ աղբյուրի հեղինակը, օրինակ՝ գրքի դիագրամը, որը ստեղծվել է նույն գրքի հեղինակ(ներ)ի կողմից, Ձեր հղումը պետք է լինի գրքին, ներառյալ՝ հեղինակի անուն(ներ)ը, հրատարակման տարին և Էջի համարը, որում դիագրամն է: Օրինակ՝

Օսբոնը և Գրինոն (2002, p. 206) ներկայացնում են կառուցման վիճակագրությունը:

Հղումը գրականության ցանկում կամ հղումների ցանկում պետք է լինի՝

Osbourn, D. and Greeno, R. (2002) *Introduction to building*, 3rd ed., Harlow: Pearson Education.

Հնարավոր է, որ դիագրամի, նկարի, աղյուսակի կամ պատկերի հեղինակը այլ մարդ լինի, իսկ աղբյուրի հեղինակը՝ այլ: Աղբյուրում պետք է նշված լինի, որ նկարի հեղինակը այլ մարդ է՝ ներառելով սկզբնաղբյուրի հղումը: Եթե այս

տեղեկատվությունը չկա գրքում, կարելի է ենթադրել, որ հեղինակը նույնն է:

Եթե նկարի, դիագրամի, աղյուսակի, կամ պատկերի հեղինակը գրքի կամ այլ աղբյուրի հեղինակը չէ, պետք է ներկայացնել նկարի հեղինակին և հղում տալ այդ աղբյուրին: Սա իրականացվում է երկրորդային հղում կատարելու սկզբունքներով:

Ձեր տեքստում՝

Քուլլի գրքում (1994, p. 38) Սթոների և Ֆրիմանի հեղինակած պատկերը բացատրում է...

Եթե աշխատանքում ներառել եք դիագրամ, ապա հղումը պետք է հետևյալ կերպ լինի՝ Սթոների և Ֆրիմանի (Coul, 1994, p. 38) պատկերը բացատրում է ...

Գրականության ցանկում կարող եք ներառել միայն աղբյուրը՝

Cole, G.A. (1994) *Strategic management: theory and practice*. London: DP Publications Ltd.

Երբ նույն աղբյուրին մեկից ավելի հղում է կատարվում

Երբեմն անհրաժեշտ է լինում հղում անել միևնույն աղբյուրին մեկից ավելի անգամ: Աշխատանքում հղումը պետք է տալ նպատակահարմար ձևակերպումների համատեքստում.

Օրուելը (2000) նկարագրում է, ինչպես է մեծ եղբայրը... Աշխատանքի (Orwell, 2000) հաջորդ մասերում նշվում է՝ կարևորելով «մտավոր ստի հսկայական համակարգը» (Orwell, 2000, p. 224) ...

Աղբյուրի ամբողջական հղումը գրականության ցանկում տրվում է միայն մեկ անգամ: Օրինակ՝

Orwell, G. (2000) Nineteen eighty-four. London: Penguin Classics.

Որոշ փաստաթղթերում, օգտագործելով ծանոթագրությունների վրա հիմնված հղումների ձևը, կարող եք տեսնել լատիներեն op.cit. և ibid. ձևերը, երբ հղումը կրկնվում է: Op.cit. նշանակում է՝ այն մասում, որտեղից նախկինում հղում է արվել (անգլ.՝ “in the item previously referred to”), իսկ “ibid” նշանակում է՝ նույն մասում/տեղում (“in the same item”): Հայալեզու և ռուսալեզու կյուրերի պարագայում հարկավոր է գրել համապատասխանաբար՝ նույն տեղում կամ “там же”: Բայց, օրինակ, հղում կատարելու Հարվարդի ոճով՝ այս հասկացությունները չեն կիրառվում, և ամեն անգամ պետք է նշվի ամբողջական աղբյուրը:

Որտե՞ղ տրամադրել հղումները

Երբ որևէ աղբյուրից տեղեկատվություն եք օգտագործում, ապա պետք է համապատասխան տեղեկատվությանը հղումն այնպես տալ, որ պարզ լինի, որ այդ տեղեկատվությունը տվյալ աղբյուրից է: Մեջբերման աղբյուրի հղումը պետք է մեջբերումից անմիջապես առաջ կամ հետո լինի՝ կախված այն բանից, թե ինչպես է այն համապատասխանում Ձեր գրածին: Օրինակ՝

Ենթադրվում է, որ - «արտակարգ իրավիճակի ռազմավարությունը կապվում է ուսանման գործառույթի հետ» (Mintzberg, 2007, p. 5): Կամ՝

Ըստ Մինտցբերգի (2007, p. 5)՝ «արտակարգ իրավիճակի ռազմավարությունը կապվում է ուսանման գործառույթի հետ»:

Այս մասին տե՛ս նաև մեջբերումներին վերաբերող բաժնում:

Եթե նախադասության մեջ տեղեկատվություն եք օգտագործել մեկ աղբյուրից, պետք է տվյալ աղբյուրին հղումը ներկայացնեք հենց այդ նախադասության մեջ: Օրինակ՝

Օլիմպիական խաղեր անցկացնելը խթանում է տուրիզմի զարգացումը խաղերի անցկացման ընթացքում և հետո (Ուլիդ, 2007):

կամ՝

Ուիդը (2007) գտնում է, որ Օլիմպիական խաղեր անցկացնելը խթանում է տուրիզմի զարգացմանը խաղերի ընթացքում և հետո:

Վերոնշյալ երկու ձևերն էլ ճիշտ են, իսկ թե նախադասության հատկապես որ մասում է հայտնվում հղումը, դա արդեն անձնական նախասիրության և տարիների ընթացքում ձեր կուտակած փորձի արդյունքում ավելի հստակ կդառնա Ձեզ համար:

Եթե տվյալ աղբյուրին առնչվող մի քանի նախադասություն եք գրել, ապա վստահ եղեք, որ հղումները կապում եք ընդհանուր աշխատության հետ:

Եթե տեղեկատվություն եք օգտագործել տարբեր աղբյուրներից, ապա պետք է հստակ նշեք, թե որ տեղեկատվությունը որ հղմանն է համապատասխանում: Օրինակներ՝

Ֆեյսբուքն ունի ավելի քան 400 միլիոն օգտատեր (Mintel, 2010) և մեծապես օգտագործվում է կազմակերպությունների կողմից տեղեկատվության տարածման համար (Gaudin, 2010): Կամ՝

Օլիմպիական խաղեր անցկացնելը խթանում է զբոսաշրջության զարգացումը խաղերի անցկացման ընթացքում և հետո (Weed, 2007): Սակայն եվրոպական տուրիստական օպերատորների ասոցիացիայի (2006) կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ տուրիզմի երկարատև զարգացում տեղի չի ունենում:

Հաճախ ավելի նպատակահարմար է մի քանի աղբյուրի հղում տալ:

Եթե Ձեր աշխատանքում ներառել եք որևէ աղբյուրից դիագրամ, աղյուսակ կամ պատկեր, ապա հղումը պետք է հայտնվի դրանց ներքևում:

Տե՛ս նկարներին, դիագրամներին, աղյուսակներին, պատկերներին վերաբերող բաժնում:

Կապելով հղումները աշխատանքի հետ

Շատ կարևոր է հասկանալ կապը Ձեր աշխատանքում տրամադրված տեղեկատվության և այդ տեղեկատվության աղբյուրների միջև: Այդ կապը կարելի է բացահայտել՝ հաշվի առնելով այն, թե որտեղ է դրվել հղումը, ինչպես նաև հասկանալով հղման կապը տեքստի հետ:

Ընդունված է համարել, որ այս կամ այն հղումը վերաբերում է միայն այն տեքստին, որը դրված է դրանից առաջ կամ հետո: Ուստի, եթե տեքստում առկա են միևնույն աղբյուրից մի քանի տողեր, ապա պետք է որևէ կերպ ցույց տալ դա: Օրինակ՝

Ուիդը (2007) նկարագրում է, թե ինչպես Օլիմպիական խաղերի անցկացումը նպաստում է զբոսաշրջության զարգացմանը թե՛ միևնույն խաղերի մեկնարկը և թե՛ դրանից հետո: Նա նաև նշում է, որ արդյունքները նկատելի են ողջ հանրապետության տարածքում և չեն սահմանափակվում միայն խաղերի անցկացման վայրով:

Այստեղ «նա նաև նշում է» հաստվածը ցույց է տալիս, որ խոսքը միևնույն հեղինակի մասին է:

Այսպիսով, հարկավոր է օգտագործել համապատասխան բառեր, որոնք թույլ կտան ցույց տալ կապը սեփական վերլուծական մտքի և այլ աղբյուրից ստացված տեղեկատվության միջև:

Եթե նոր պարբերություն է սկսվում՝ շարունակելով օգտագործել միևնույն աղբյուրը ինչ-որ նախորդ պարբերության մեջ, ապա պետք է կա՛մ կրկին հղում տալ, կա՛մ նշել, որ խոսքը միևնույն հեղինակի/աղբյուրի/երևույթի մասին է:

Միասլվելու հնարավորությունները բազմաթիվ են, ընդ որում հիմնական սխալները բխում են տեղեկատվության թերի մեկնաբանումից: Կարլինգը (2009) նշում է, որ այս գործընթացը բավականին բարդ է և ժամանակատար, և գոյություն ունեն այլ՝ ավելի հեշտ տարբերակներ: Այլընտրանքային մեթոդներն են վիդեո և թվային (Կարլինգ, 2009) տեղեկությունները, որոնք մի շարք առավելություններ ունեն՝ ի համեմատ տեղեկատվության ստացման հիմնական մեթոդի:

Եթե տեքստի մեջ մեջբերվում է միևնույն աղբյուրից մի քանի հատված, ապա պետք է ամեն անգամ տալ այդ աղբյուրի հղումը:

Այնուամենայնիվ, պետք է զգուշանալ և հաշվի առնել այն հանգամանքը, թե որքանով է աշխատանքը հիմնավորված տեղեկատվության մեկ աղբյուրից հաճախ օգտվելու պարագայում: Հատկապես պետք է ուշադիր լինել այն դեպքում, երբ ակնկալվում է, որ տեքստում կլինի մի քանի աղբյուրից տեղեկատվություն՝ համալրված աշխատության հեղինակի սեփական վերլուծական մտքերով/մեկնաբանություններով: Միևնույն ժամանակ սա միանգամայն ընդունելի է, եթե իրականացվում է հենց մեկ աղբյուրի վերլուծություն, ինչի դեպքում կարելի է վերնագրով արտահայտել աղբյուրը, տալ այդ աղբյուրի ամբողջական հղումը գրականության ցանկում և տեքստում անընդհատ չկատարել միևնույն հղումը: Սա հատուկ է, օրինակ, գրքի վերլուծություններին (անգլ.՝ book review):

Կատարել հղումներ՝ միաժամանակ մի քանի աղբյուրի

Երբեմն հղում է կատարվում միաժամանակ մի քանի աղբյուրի: Նման ոճը ընդունելի է միայն այն դեպքում, երբ հղումները վերաբերում են ոչ թե նախադասության մեջ արտահայտված մեկ հստակ տեղեկատվության, այլ դրանք բոլորը փոխկապված տեղեկատվության աղբյուրներ են: Սա հաճախ է պետք լինում մի քանի տեսաբանի՝ միևնույն երևույթի/տեսության մասին վերլուծություն իրականացնելիս: Օրինակ՝

Այս հարցի շուրջ ընթացել են բանավեճեր (Fleming, 2002; Smythe and Herbert, 2005; McGregor et al., 2007):

Նշված օրինակում հղումները դրված են՝ ըստ ժամանակագրական տրամաբանության՝ ընտրելով ամենահին աղբյուրը՝ որպես առաջին: Այսպես, պարզ է դառնում երևույթի վերաբերյալ տարբեր մոտեցումների, մեկնաբանությունների, դիսկուրսի զարգացումը: Եթե ժամանակագրական տրամաբանությամբ առաջնորդվել չի ստացվում, ապա ընդունելի է նաև այբբենական կարգով դասակարգման ձևը:

Տարբեր ռեակտիվների արդյունքների տարբերությունները տատանվում են 2.4 - 8.9 միջակայքում (Christiansen, 2004; Samuels, 2001):

Միաժամանակ մի քանի աղբյուրի հղումների տեղադրումը ընդունելի է, եթե Դուք ստեղծել եք դիագրամ հիմնվելով մի քանի աղբյուրի վրա: Օրինակ՝

Աղյուսակ ...

Աղբյուրներ՝ Քաղցկեղի հետազոտություններ, Մեծ Բրիտանիա (2010)

Ազգային վիճակագրության գրասենյակ (2008)

Պարտադիր չէ ցույց տալ, թե աղյուսակի որ հատվածը որ հղման աղբյուրին է համապատասխանում:

Հղման աղբյուրները կարող են տեղադրված լինել կամ այբբենական կարգով, կամ ժամանակագրական տրամաբանությամբ:

Նույնիսկ եթե միաժամանակ տեղադրվել է մի քանի հղում, գրականության

ցանկում պետք է նշել յուրաքանչյուրն առանձին-առանձին:

Հղումներ հավելվածում

Եթե աշխատությանը կցված է հավելված, որում հղում է կատարված այլ աղբյուրի, ապա հավելվածի վերջում պետք է ներկայացնել օգտագործված գրականության ցանկը, ինչպես նաև հավելվածի տեքստում հղում տալ համապատասխան աղբյուրներին:

Մեջբերումներ

Մեջբերումները ենթադրում են ուրիշ հեղինակի ուղղակի խոսքի տեղադրում սեփական տեքստում: Այս պարագայում հարկավոր է ցույց տալ, որ սա մեջբերում է՝ օգտագործելով համապատասխան կետադրական նշաններ, ինչպես նաև տալ հղում նաև կոնկրետ էջին և ներառել տվյալ աշխատությունը օգտագործված գրականության ցանկում:

խոսքի մեջբերում և համապատասխան կետադրություն

Եթե ցանկություն կա օգտագործելու հեղինակի ուղղակի խոսքերը առանց միտքը վերաձևակերպելու, ապա պետք է որևէ կերպ ցույց տալ, որ դա այլ հեղինակի միտքն է: Դա հնարավոր է անել չակերտների, համապատասխան կետադրական նշանների միջոցով: Եթե խոսքը ավելի ծավալուն (ավելի քան 20 բառ) մտքի մասին է, ապա կարելի է ուղղակի այն առանձնացնել ընդհանուր պարբերությունից՝ ցույց տալով, որ դա մեջբերում է:

Եթե մեջբերված խոսքում կատարվում են փոփոխություններ, ապա համապատասխան՝ (...) և [] նշաններով պետք է տարանջատել մեջբերումը սեփական ձևակերպումներից: Դա կարող է արվել մեկնաբանության ձևով: Օրինակ՝

Հաճախ վիճում են այն հարցի շուրջ, որ «փաստարկները վկայում են այն

մասին, որ այս խնդիրը կառավարությունում մեծ շփոթվածություն է առաջացնում»
(Robertson, 1996, p. 34):

Այս օրինակում մենք տեսնում ենք, որ փակագծում տրված է էջը, որում կարելի է գտնել մեջբերումը: Եթե ցանկություն կա 20 բառից ավելի մեջբերում կատարելու, ապա պետք է կրկին նշվի, որ ողջ հատվածը այլ հեղինակից մեջբերում է: Օրինակ՝

հնչպես նշում է Բյեյզը (1991, p. 1),

Միկրոքաղաքականությունը վերաբերում է ուժի ֆենոմենին և այն հարցին, թե ինչպես են մարդիկ այն օգտագործում ուրիշների վրա ներազդելու և սեփական ես-ը պաշտպանելու համար: Այն նաև վերաբերում է համագործակցությանը և այն հարցին, թե ինչպես են մարդիկ աջակցում մեկը մյուսին՝ իրենց նպատակներին հասնելու համար:

Մեջբերում անելիս պետք է պահպանել հեղինակի կատարած շեշտադրումները: Եթե անհրաժեշտություն կա շեշտադրելու մեջբերման մեկ հատված, ապա պետք է կիրառել համապատասխան կետադրություն՝ [հեղինակի խոսքի շեշտադրված հատված]: Եթե անհրաժեշտություն կա հեղինակի կատարած շեշտադրման ընդգծման, ապա՝ [ընդգծված փաստարկ հեղինակի կողմից]:

Ցուցում. մեջբերման ժամանակ անհրաժեշտ է պահպանել տեքստի հստակությունը:

Խորհուրդ. Է տրվում մեջբերումների՝ առանձնացված պարբերությամբ տեքստում օգտագործել միջտողային ավելի փոքր հեռավորություն և ավելի փոքր տառաչափ:

Գիտական աշխատանք գրելիս ցանկալի է ոչ թե բառացի մեջբերումներ կատարել, այլ հակիրճ ներկայացնել հեղինակի միտքը՝ որպես կարճ ամփոփում:

Չափից շատ մեջբերումները ծանրացնում են տեքստը և նվազեցնում Ձեր կողմից արված վերլուծական աշխատանքի արժեքը: Հարկավոր է ուշադիր կերպով պահպանել Ձեր և մեջբերված խոսքերի միջև համամասնությունը՝ շեշտադրելով Ձեր կողմից ներկայացված հիմնական տեքստը, որը հիմնավորելիս երբեմն անհրաժեշտ են մեջբերումներ:

Մեջբերումներ ոչ հայալեզու կյուրթերից

Եթե մեջբերում է կատարվում ոչ հայալեզու տեքստից, ապա մեջբերումը պետք է կատարվի հայերենով: Հարկավոր է նշել հեղինակին՝ խոսքը դնելով չակերտների մեջ:

Մեջբերումներ թարգմանված կյուրթերից

Եթե մեջբերում է կատարվում թարգմանված կյուրթից, ապա հարկավոր է նշել խոսքերի հեղինակին (ոչ թե թարգմանչին) և մեջբերումը կատարել կրկին հիմնական տեքստի լեզվով:

Եթե այլ լեզվից է կատարվում մեջբերումը, և Դուք այն թարգմանում եք, ապա փորձե՛ք կյուրթը ներկայացնել որպես անուղղակի մեջբերում՝ վերապատմելով ասելիքը Ձեր բառերով: Այնուամենայնիվ, պետք է նշել այն աղբյուրը, որին հղում եք անում:

Վերաձևակերպում և ամփոփում

Ակադեմիական տեքստերի վրա աշխատելիս հաճախ կարիք է լինում վերաձևակերպել կամ ամփոփել այլ հեղինակի խոսքը՝ հղում տալով համապատասխան աղբյուրին:

Վերաձևակերպում է կատարվում, երբ ուրիշ հեղինակի խոսքերը սեփական ձևակերպումներով, վերլուծությամբ են ներկայացվում: Խոսքը գրագողության մասին

չէ: Երբ վերաձևակերպում է արվում, ենթադրվում է, որ պետք է ձևակերպվի, քննարկվի այլ հեղինակի միտքը սեփական բառերով:

Վերաձևակերպված տեքստի համար հարկավոր է հղում կատարել: Նույնիսկ եթե տեքստը անմիջապես հեղինակի խոսքով չի գրվել, միևնույն է, պետք է նշել համապատասխան աղբյուրը:

Ամփոփումը ենթադրում է տեքստի հիմնական մտքի հակիրճ ներկայացում: Այս պարագայում նույնպես կարևոր է հղում անել համապատասխան աղբյուրին:

Երկրորդային հղում, երբ դուք չեք կարդացել բուն նյութը, սակայն դրա մասին կարդացել եք մեկ այլ տեղում. միջնորդավորված մեջբերում

Հղում կատարելիս շատ կարևոր է հաշվի առնել տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրը: Օրինակ, եթե տեղեկատվություն է դուրս բերվում Ֆրլոնգի (2012) հետազոտության մասին Պրինգի (2014) գրքից, ապա հարկավոր է գտնել Ֆրլոնգի համապատասխան գիրքը, կարդալ և հղում կատարել այդ գրքին: Այսկերպ հնարավոր է զերծ մնալ սխալ մեկնաբանումներից: Եթե որևէ պատճառով հնարավոր չէ գտնել համապատասխան նյութը, ապա պարտադիր է նշել, որ մեջբերումը երկրորդային աղբյուրից է: Օրինակ`

Ռոբսոնի (2002) գրքում մեջբերում կա, որը հեղինակը ներկայացնում է` հղում անելով Անաստասին և ՄաքԴոնալդին (1994):

Եթե այս միտքը մեջբերելու անհրաժեշտություն է առաջանում, ապա լավագույն տարբերակն է գտնել Անաստասի և ՄաքԴոնալդի (1994) համապատասխան աշխատությունը: Եթե հնարավոր չէ այդպես անել, ապա պետք է գրել հետևյալ կերպ.

Անաստասը և ՄաքԴոնալդը (1994), ինչպես նշվում է Ռոբսոնի գրքում (2002, p. 167), բացատրում են, թե ինչպես «ճկուն կամ որակական մեթոդները ավանդաբար

...»:

Այս պարագայում օգտագործված գրականության ցանկում պետք է նշել Ռոբսոնի գիրքը՝

Robson, C. (2002) *Real world research*. 2-nd ed. Oxford: Blackwell.

Հարկավոր է նաև հղում տալ բնօրինակին, որ կարդացողին հասկանալի լինի՝ որն է տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրը, նաև հարկավոր է նշել համապատասխան էջը:

Anastas, J. W., and MacDonald, M. (1994) *Research design for social work and the human services*. San Francisco, CA: Jossey-Bass. (Cited in Robson, 2002, p. 167).

Գրականության ցանկ

Աշխատանքի վերջում հարկավոր է ներկայացնել գրականության ամբողջական ցանկը:

Գրականության ցանկի ձևաչափը

Գրականության ցանկը պետք է լինի համապարփակ, ճշգրիտ և հստակ: Յուրաքանչյուր նշված աղբյուր պետք է բավարար տեղեկատվություն պարունակի այն մասին, թե ինչպես գտնել տվյալ նյութը՝ այն հասանելի դարձնելով ընթերցողին:

Յուրաքանչյուր աղբյուր պետք է ցանկում նշվի մեկ անգամ: Պետք չէ նշել աղբյուրը ամեն անգամ, երբ այնտեղից մեջբերում է կատարվել:

Հարվարդի հղման համակարգում գրականության ցանկը կազմվում է այբբենական կարգի տրամաբանությամբ և ոչ թե ըստ նշված նյութերի տեսակի՝ էլեկտրոնային, տպագիր և այլն:

Եթե երկու աղբյուրում միևնույն հեղինակն է, սակայն համահեղինակները

տարբեր անձինք են, ապա նույն այբբենական տրամաբանությամբ որոշվում է համահեղինակների հերթականությունը՝ փաստորեն, ըստ հաջորդող հեղինակների ազգանվան առաջին տառի:

Եթե հեղինակները նույնն են, ապա հերթականությունը որոշվում է տպագրման տարեթվի հիման վրա:

Եթե հեղինակները նույնն են, և տպագրման/հրատարակման տարեթիվն էլ է նույնը, ապա ցանկանալի է նշել «ա, բ, գ» տառերը տարեթվից հետո՝ թե՛ տեքստի մեջ և թե՛ գրականության ցանկում:

Եթե հեղինակ չկա, ապա պետք է հաշվի առնվի վերնագրի առաջին բառի տեղը այբբենական կարգում:

Եթե կյուբի հղումը սկսվում է թվով, ապա այն պետք է նշվի գրականության ցանկի ամենասկզբում մինչև այբբենական կարգով նշված աղբյուրների դասակարգումը:

Եթե Ձեր տեքստը ստեղծելիս օգտագործել եք անգլալեզու, ռուսալեզու և հայալեզու գրականություն, ապա նախ, հետևելով վերը ներկայացված կանոններին, այբբենական կարգով ներկայացրեք այն լեզվով աղբյուրները, որ լեզվով գրել եք Ձեր աշխատանքը, հետո՝ հաջորդականությամբ մյուս երկու լեզուներով աղբյուրները՝ կրկին այբբենական կարգով դասավորելով աղբյուրները: Ենթադրենք՝ Ձեր տեքստը ստեղծել եք հայերենով և կիրառել եք նաև ռուսերեն և անգլերեն աղբյուրներ. այդ դեպքում Ձեր գրականության ցանկը նման կլինի ստորև ներկայացված ցանկին:

Գրականության օրինակելի ցանկ

Աբովյան, Խ. (1950) *Երկերի լիակատար ժողովածու*: 5-րդ հատոր, Երևան. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիա:

- Ալպոյաճյան, Ա. (1926) Կրթական շարժումը հայոց մէջ (անցյալ դարու կէսէն մինչև ընդհանուր պատերազմ): «*Կոչնակ*» շաբաթաթերթ, թիվ 1, 147-155:
- Ալպոյաճյան, Ա. (1946) *Պատմութիւն հայ դպրոցի*: Ա հատոր, Կահիրե. Նոր Աստղ:
- Աղայան, Էդ. (1976) *Արդի հայերէնի բացատրական բառարան*: I հատոր, Երևան. «Հայաստան» հրատարակչություն:
- Աղայան, Ղ. (1869) Խորհրդածություն դաստիարակության վերա: «*Արարատ*» ամսագիր, թիվ Ա, 22-24:
- Балабанович, Е. (1951) *А.С. Макаренко: очерк жизни и творчества*. М.: Гос. изд-во культурно-просветительной лит-ры.
- Бачинин В. А. (2001) "Сорок три тезиса на пути от классики к постмодерну. Серия "Symposium", выпуск 14, 14-26.
- Бергер П., Лукман Т. (1995) *Социальное конструирование реальности*. Трактат по социологии знания. Москва: Медиум.
- Булкин А. П. (2005) Социокультурная динамика образования. Дубна: "Феникс+".
- Гадамер Х.-Г. (1988) *Истина и метод: Основы филос. Герменевтики*. Москва: Прогресс.
- Churchill, G. A. (2000) *Basic marketing research*. 4th ed., London: Dryden Press.
- Churchill, G. A. and Brown, T. J. (2004) *Basic marketing research*. 5th ed., Cincinnati: South Western.
- Churchill, G. A. and Peter, J. P. (1998) *Marketing: creating value for customers*. 2nd ed., Boston: Irwin/McGraw Hill.
- Churchill, G. A. et al. (1999) *Sales force management*. 6th ed., Boston: Irwin/McGraw-Hill.
- Ellis, J. (1992) *Visible fictions: cinema, television, video*. Rev. ed., London: Routledge.

Ellis, J. (2000) *Seeing things: television in the age of uncertainty*. London: Tauris.

Johnson, D. W. and Johnson, F. P. (1994) *Joining together: group theory and group skills*. Boston: Allyn and Bacon.

Mallier, T. and Bailey, M. (1997) How students search for vacation employment. *International journal of manpower*, 18 (8), 702-714.

Nielsen, J. (1993a) *Hypertext and hypermedia*. London: Academic Press.

Nielsen, J. (1993b) *Usability engineering*. London: Academic Press.

The pedant's revolt. (2004) [DVD off-air]. BBC4. 5 December.

Reitzig, M. (2004) Strategic management of intellectual property. [Online]. *MIT Sloan management review*, 45 (3), 35-40. Available from: <http://search.epnet.com/> [Accessed 18 February 2010].

Ten days in Paris. (1991) [video off-air]. Directed by Tim Whelan. 18 April.

Էլեկտրոնային և համացանցային ռեսուրսների մեջբերման սկզբունքները

Էլեկտրոնային կամ համացանցային ռեսուրսներ մեջբերելիս անհրաժեշտ է հղման մեջ ներառել.

- Ռեսուրսի վերաբերյալ մանրամասներ: Անհրաժեշտ է ներառել տեղեկություններ հեղինակի, տարեթվի, վերնագրի (եթե առկա է) մասին: Սա իրականացվում է, որ ընթերցողի համար հասկանալի լինի ռեսուրսը՝ առանց այն ինտերնետում որոնելու: Սա նաև թույլ է տալիս հեշտությամբ գտնել ռեսուրսը ինտերնետային հասցեի փոփոխության դեպքում:
- Համացանցային հասցե (URL): Շատ դեպքերում օգտագործված կոնկրետ էջի

կամ փաստաթղթի համար անհրաժեշտ է տրամադրել առցանց հասցեն: Բացառություն են կազմում տեղեկատվական տվյալների բազայի հասանելիությամբ համացանցային ամսագրերից, հոդվածներից մեջբերումները: Վերջիններիս հետ անհրաժեշտ է այլ կերպ վարվել, քանի որ հասցեն (URL) կարող է լինել ոչ կիրառելի երկարության պատճառով, կամ այն հնարավոր է՝ պարունակի օգտատերի յուրահատուկ հերթական համարը (session ID), ինչը կնշանակի, որ հղումը ապագայում չի կարող գործել: Այսպիսի հոդվածներին մեջբերումը պետք է ապահովի դրան տրված թվային տարբերակիչը (DOI): Եթե այն առկա չէ, ապա միայն այս դեպքում կարող է օգտագործվել առցանց հասցեն (URL):

Ի գիտություն: Եթե Էլեկտրոնային հաղվածաշարն ունի տպագիր տարբերակ, կարող եք օգտվել Էլեկտրոնայինից, բայց մեջբերել տպագիր հոդվածը:

- Ռեսուրսի օգտագործման ժամանակային նշում: Համացանցային ռեսուրսները կարող են ժամանակի ընթացքում փոփոխվել, ուստի կարևոր է մատնանշել՝ երբ է այն օգտագործվել: Դա իրականացվում է՝ ներառելով վերջինիս հասանելի լինելու օրը, ամիսը, տարին:
- Անհրաժեշտ է ներառել [առցանց/онлайн/online] նշումը մեջբերման մեջ՝ ընթերցողին հասկանալի դարձնելով, որ օգտագործվել է Էլեկտրոնային ռեսուրս: Առցանց հասցեն (URL), ռեսուրսի օգտագործման ժամանակային նշումը և [Առցանց] նշագրումը պիտի առկա լինեն բոլոր համացանցային ռեսուրսների մեջբերման ժամանակ: Մեջբերման այլ մանրամասները տարբերվում են՝ կախված օգտագործված ռեսուրսի տիպից և վերջինիս մասին տեղեկության հայթայթման հնարավորություններից: Էլեկտրոնային ամսագրում հոդվածի մեջբերումը, օրինակ, տարբերվում է Էլեկտրոնային գրքի մեջբերումից:

Հեղինակ(ներ)ը մեջբերումներում և հղումներում

Հարվարդի մեջբերումներում ռեսուրսների հեղինակ(ներ)ի մանրամասները հղումների և մեջբերումների ամենակարևոր մասն են: Հղումների ցանկում հեղինակները նշվում են՝ ըստ ազգանվան և անվան սկզբնատառերի: Իսկ տեքստային հղումներում նշվում է միայն ազգանունը:

Բազմաթիվ հեղինակներ

Եթե հղվող նյութն ունի բազմաթիվ հեղինակներ, անհրաժեշտ է ներառել առավելագույնը առաջին երեքին: Եթե վերջիններս երեքից ավելի են, նշեք առաջին հեղինակին, այնուհետև՝ «և այլք» (անգլ.՝ et al.; ռուս.՝ и др.):

